2019, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (530)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանին

18 մարտի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամմադ Ալ Զաաբիին:

Շնորհավորելով դեսպանին նշանակման կապակցությամբ՝ Նորին Սրբությունը նրան մաղթեց արդյունավետ գործունեություն՝ ի նպաստ հայ-արաբական գործակցության առավել սերտացման:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ հայ-արաբական հարաբերությունները դարերի պատմություն ունեն՝ երախտագիտությամբ արձանագրելով նաեւ այն փաստը, որ Հայոց ցեղասպանությունից հետո բազմաթիվ հայորդիներ ապաստան են գտել արաբական երկրներում: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձ կատարեց երկու երկրների միջեւ այսօր առկա համագործակցությանը:

Դեսպան Մուհամմադ Ալ Զաաբին, ուրախություն հայտնելով հանդիպման առիթով, խոսեց իր ծրագրերի մասին: Վերջինս Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկացրեց նաեւ, որ Արաբական Միացյալ Էմիրությունները 2019 թ. երկրում հռչակել են որպես հանդուրժողականության տարի:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը եւ դեսպանն անդրադարձան պետությունների եւ ժողովուրդների միջեւ հանդուրժողականության ոգու հաստատման կարեւորությանը՝ իբրեւ խաղաղ համակեցության երաշխիքի, ինչպես նաեւ կրոնների դերակատարությանը՝ որպես մարդկային կյանքում սիրո, փոխադարձ հարգանքի եւ համերաշխության առատացման գործոնի: Կարեւորվեցին այս ուղղությամբ իրականացվող ծրագրերը:

Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդին եւ ներկայացուցիչներին

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Մովսես արք. Մովսիսյանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին թեմի հոգեւոր սպասավորներ, թեմական խորհրդի անդամներ, բարերարներ եւ տարբեր համայնքների ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում Մովսես սրբազանին հանձնվեց արքության պատվի՝ հայրապետական սրբատառ կոնդակը: Դեռեւս փետրվարի 26-ին՝ Ս. Ղեւոնդյանց տոնին, Վեհափառ Հայրապետի կողմից Մովսես սրբազանին շնորհվել էր արքության պատիվ՝ ի գնահատություն Հայոց Եկեղեցու անդաստանում տարիների վաստակի եւ նվիրյալ ծառայության:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, ապա Հարավային Ռուսաստանի հայոց թեմի պատվիրակությանը ողջունեց Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանը:

Այնուհետեւ Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանն ընթերցեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որում մասնավորապես ասված է.

«Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում եւ Զագորսկի հոգեւոր ակադեմիայում ավարտելով Ձեր հոգեւոր ուսումնառության ու պատրաստության շրջանը՝ Դուք Տիրոջ կանչով նվիրվեցիք Ավետարանի լույսը մեր ժողովրդի կյանքում տարածելու սրբազան գործին՝ որպես կուսակրոն հոգեւորական Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի օրհնությամբ Դուք հովվական ծառայության կոչվեցիք Մոսկվայի Սբ Հարություն եկեղեցում, ապա օրինակելի նվիրումով վարեցիք Սուրբ Հռիփսիմե վանքի վանահոր պաշտոնը՝ Ձեր պարտականությանց մեջ միշտ դրսեւորելով ծառայական մշտարթուն ոգի եւ աննվազ նախանձախնդրություն՝ հանդեպ մեր Եկեղեցին եւ քրիստոսասեր մեր ժողովուրդը:

Ձեր ծառայագործությունն առավելաբար արդյունավոր եղավ Հարավային Ռուսաստանի հայոց թեմում, ուր, որպես առաջնորդ, պաշտոնավարում եք շուրջ քսան տարի: Մենք ուրախ ենք մեծապես, որ Դուք կարողացել եք շահել հավատավոր հայորդիների սերն ու գնահատանքը եւ միավորել նրանց ջանքերը՝ հանուն տիրախնամ թեմում հոգեւոր վերազարթոնքի: Այս տարիների ընթացքում Ձեր քաջալերանքով եւ նախաձեռնությամբ թեմում կառուցվել են նոր եկեղեցիներ, իրագործվել բազում եկեղեցաշեն ու ազգանվեր ծրագրեր՝ շինություն եւ պայծառություն հավելելով քրիստոսահիմն մեր Սուրբ Եկեղեցուն»:

Հայրապետական կոնդակի հրապարակումից հետո Նորին Սրբությունն այն հանձնեց Մովսես սրբազանին, ապա նրան ընծայաբերեց նաեւ եպիսկոպոսական պանակե:

Թեմի համար ոգեւորիչ այս առիթով իր սրտի խոսքն ասաց թեմական խորհրդի ատենապետ տիար Մարտին Հովհաննիսյանը: Վերջինս իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ շատ ուրախալի եւ անսպասելի արարողության, ինչպես նաեւ երիտասարդ իրենց թեմի նկատմամբ դրսեւորվող հայրական ուշադրության համար՝ հավաստիացնելով, որ մշտապես ջանում են իրենց ծառայությամբ Սուրբ Էջմիածնի եւ Հայոց Հայրապետի պատիվը բարձր պահել:

Իր ապրումները ներկաներին փոխանցեց նաեւ Մովսես արքեպիսկոպոսը: Շնորհակալություն հայտնելով բարձր պատվի արժանացնելու համար՝ սրբազանը վերհիշեց թեմում իր նշանակումը՝ հաստատելով, որ առաջնորդության շուրջ քսան տարվա ընթացքում փորձել է իր հոգեւոր ու մտավոր կարողություններն առավելագույնս ծառայեցնել թեմի հոգեւոր եւ ազգային կյանքի զարգացմանը: Մովսես սրբազանը նաեւ ընդգծեց, որ այս պատվով ավելի է մեծանում պատասխանատվությունը, եւ շատանում են պարտականությունները, որոնք պիտի կատարի սիրով եւ հանձնառությամբ:

Հանդիպումն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Ողջունելով թեմի ներկայացուցչական պատվիրակությանը՝ Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ Մովսես սրբազանի տարիների վաստակին, խոնարհ, նվիրյալ ծառայությանը, որով ջանքեր է գործադրել, որպեսզի զորանա հոգեւոր կյանքը, պատշաճ խնամք ցուցաբերվի Հարավային Ռուսաստանում բնակվող հայորդիների նկատմամբ, ապրեն հավատարիմ իրենց ազգային ինքնությանը, հոգեւոր-ազգային արժեքներին ու ավանդներին: Խոսելով Ռուսաստանում հայոց ներկայության շուրջ հազարամյա պատմության եւ ազգային ավանդույթների պահպանության անհրաժեշտության մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորությամբ ընդգծեց, որ եկեղեցին է, որ պետք է համախումբ պահի մեր ժողովրդին այդ արժեքների շուրջ, արթուն պահի հայ ոգին ու գիտակցությունը, որպեսզի հպարտ ապրեն իրենց ազգային ինքությամբ:

Հայոց Հովվապետն ուրախությամբ արձանագրեց, որ թեմն առավել զորանում եւ զարգանում է՝ ընդլայնելով իր հոգեւոր-ազգային գործունեությունը: Գոհունակություն հայտնելով Կրասնոդարի մայր եկեղեցու կառուցման առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց բոլոր այն անձանց, որոնք կարելիի շրջանակներում աջակցում են Հարավային Ռուսաստանում շեն ու պայծառ հայոց կյանքի կերտման սրբազան գործին:

Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Տերն Իր շնորհները հեղի հայորդիների կյանքից ներս եւ առատացնի հայրենաշեն ու եկեղեցանվեր բարի գործերը:

Տավուշի նորանշանակ մարզպետին

19 մարտի

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Տավուշի նորանշանակ մարզպետ տիար Հայկ Չոբանյանին՝ ուղեկցությամբ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանի:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհավորելով մարզպետին՝ նշանակման առիթով, մաղթեց նրան հաջողություններ իր առաքելության մեջ: Տեղեկանալով մարզի զարգացման եւ առաջընթացի հետ կապված մարզպետի մտածումների եւ ծրագրերի մասին՝ Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ վերջինս կկարողանա դրանք կյանքի կոչել եւ արդարացնել մարզի բնակչության սպասումները: Նորին Սրբությունը նաեւ խոսեց հիշյալ ծրագրերում Տավուշի թեմի ներգրավվածության մասին:

Իր հերթին մարզպետը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հանդիպման եւ հայրապետական օրհնության համար: Տիար Հայկ Չոբանյանը մարզի կյանքի աշխուժացման եւ զարգացման գործում կարեւոր նկատեց սերտ համագործակցությունը Տավուշի թեմի հետ:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Տավուշի նորանշանակ մարզպետին

Սկիզբը՝ էջ 1

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ Տավուշի մարզի Բերդավան գյուղից գերեվարված եւ Ադրբեջանում բանտարկված Կարեն Ղազարյանին հայրենիք վերադարձնելու խնդրին: Վեհափառ Հայրապետի համոզմամբ՝ այդ ջանքերը ներկայումս պետք է բազմապատկվեն՝ ներգրավելով նաեւ միջազգային կառույցներին:

Վերջում Նորին Սրբությունը մարզպետին մաղթեց Աստծու օգնականությունն իր ծառայության մեջ՝ հանուն տավուշցիների արժանապատիվ կյանքի կերտման:

20 մարտի

Վերապատրաստման դասընթացների մասնակիցներին

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպում ունեցավ եկեղեցականների վերապատրաստման հերթական դասընթացների քսան մասնակիցների հետ, որոնք ժամանել էին Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի տարբեր թեմերից: Դասընթացների պատասխանատու Եզնիկ արք. Պետրոսյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ այս հավաքը 11-րդն է, եւ մինչ օրս վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 198 եկեղեցական:

Հոգեւոր հովիվների հետ զրույցում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց Մայր Աթոռում կազմակերպվող այս դասընթացների կարեւորությունը՝ իրենց ծառայության առավել արդյունավետ իրագործման համար՝ այս համախմբումները լավագույն առիթը նկատելով Աստծո եւ Ս. Էջմիածնի հետ իրենց ուխտի վերանորոգման, հավատքի եւ հոգեւոր կյանքի մեջ զորացման:

Վեհափառ Հայրապետն արձանագրեց, որ այսօր Հայոց Եկեղեցու առջեւ հայրենիքում եւ Սփյուռքում ծառացած են բազում մարտահրավերներ, որոնց հաղթահարման համար եկեղեցականը պետք է լինի ըստ ամենայնի պատրաստված ու զինված համապատասխան հովվական գիտելիքներով, պետք է հավատարմորեն առաջնորդվի Աստծու պատվիրաններով:

Նորին Սրբությունը քահանա հայրերին հորդորեց բոլորանվեր իրականացնել իրենց հոգեփրկչական եւ ազգային ինքնության պահպանության սրբազան առաքելությունն աշխարհասփյուռ հայ համայնքներում:

Իր հայրական օրհնությունը բերելով հոգեւորականներին՝ Հայոց Հովվապետը նրանց մաղթեց Աստծո օգնականությունն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը՝ իրենց պատասխանատու ծառայության մեջ:

24 մարտի

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահին

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին՝ ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչական ժողովի անդամ, ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ տիար Վազգեն Յակուբյանի ուղեկցությամբ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահն անդրադարձան Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի միջեւ ձեւավորված բազմամյա համագործակցությանը, որն ընդգրկում է եկեղեցաշինական, կրթական եւ սոցիալական զանազան ծրագրեր: Մասնավորապես կարեւորվեցին ՀԲԸՄ-ի աջակցությամբ տարիներ շարունակ համատեղ իրականացվող հայորդյաց տների ու բարեգործական ճաշարանների գործունեությունն ու դրանց ընդլայնման հնարավորությունները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով արձանագրեց ՀԲԸՄ-ի շարունակական զորակցությունը Հայոց Եկեղեցուն՝ հայ ժողովրդի հոգեւոր կյանքի զորացմանն ու Հայոց Եկեղեցու պատմական առաքելությանն ի նպաստ իրականացվող նախաձեռնություններում:

Գարեգին Բ Հայրապետը եւ տիար Պերճ Սեդրակյանը խոսեցին նաեւ Հայոց Եկեղեցու եւ միության կողմից Սփյուռքի համայնքներում իրականացվող ազգօգուտ ծրագրերի մասին, որոնք միտված են Սփյուռքում համայնքային կյանքի աշխուժացմանը եւ ազգային ինքնության պահպանությանն ու զարգացմանը: Ազգանպաստ այս առաքելության արդյունավետ իրագործման մեջ ընդգծվեց ազգային, հոգեւոր պատասխանատու հաստատությունների ջանքերի մեկտեղման ու նոր ձեւավորվող համայնքների ազգային-հոգեւոր կարիքների բավարարման անհրաժեշտությունը: Տիար Սեդրակյանն իր գոհունակությունը հայտնեց, որ Մայր Աթոռի բազմաթիվ երիտասարդ հոգեւորականներ այսօր իրենց արդյունավետ ծառայությամբ մեծապես նպաստում են Սփյուռքի թեմերի ազգային-եկեղեցական կյանքի աշխուժացմանը՝ մանավանդ երիտասարդության շրջանում:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը տիար Պերճ Սեդրակյանին տեղեկացրեց մարտի 12-ից 14-ը Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովի արդյունքների մասին: Մասնավոր անդրադարձ կատարվեց 2020 թվականի նոյեմբերին ազգային-եկեղեցական ժողով գումարելու որոշմանը եւ ժողովի կարեւոր առաքելությանը՝ Հայոց Եկեղեցու հետագա գործունեության ուղենշման գործում: Տիար Պերճ Սեդրակյանը վստահեցրեց, որ ՀԲԸՄ-ն սփյուռքատարած իր աշխարհական պատվիրակների միջոցով ամենայն աջակցություն է ցուցաբերելու Եկեղեցու կազմակերպական հզորացմանն ու ազգային-կրոնական ու սոցիալական առաքելությանը նպաստող կարեւոր նշանակություն ունեցող ժողովի հաջողությանը:

ՀԲԸՄ-ի նախագահը Վեհափառ Հայրապետից հետաքրքվեց Մայր տաճարի ամրակայման եւ վերանորոգության ընթացքի մասին: Նորին Սրբությունը ընդհանուր գծերով ներկայացրեց կատարված աշխատանքները՝ տեղեկացնելով, որ տաճարի ներքին վերականգնման աշխատանքները, եկեղեցասեր բարերարների աջակցությամբ, ծրագրվում է ավարտել 2020 թվականին:

Խոսելով հայրենիքի առջեւ ծառացած ներքին եւ արտաքին մարտահրավերների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահը դրանց հաղթահարման գործում կարեւորեցին Սփյուռքի հավատավոր մեր ժողովրդի մասնակցությունը: Այս իմաստով շեշտվեց Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման եւ համահայկական ներուժի՝ հայրենիքի ապահովությանն ու բարօրությանը ծառայեցնելու կարեւորությունը:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետն ու տիար Պերճ Սեդրակյանը վերահաստատեցին իրենց հանձառությունը՝ Հայոց Եկեղեցու եւ ՀԲԸՄ-ի համատեղ ծրագրերով եւ գործակցությամբ շարունակելու ջանքեր ներդնել՝ հանուն Հայաստանում եւ Սփյուռքում ազգային միասնության ամրապնդման, հայապահպանության եւ ազգային-հոգեւոր արժեհամակարգի ու ավանդույթների անաղարտ պահպանման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Գյումրի

ՄԱՐՏԻ 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Գյումրի:

Յոթվերք Ս. Աստվածածին առաջնորդարանիստ եկեղեցու առջեւ Նորին Սրբությանը դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանը եւ Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանը: Զանգերի ղողանջների ներքո Վեհափառ Հայրապետը շքախմբով, եկեղեցու սպասավորների եւ հավատացելոց ուղեկցությամբ, մուտք գործեց եկեղեցի, ուր կատարվեց աղոթք, որից հետո Նորին Սրբությունն օրհնեց ներկա ժողովրդին:

Այնուհետեւ Շիրակի թեմի առաջնորդարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանի եւ Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանի հետ: Նորին Սրբությունը հետաքրքրվեց Գյումրիում եւ Շիրակի մարզում իրականացվող զարգացման տարբեր ծրագրերով, առկա հիմնախնդիրներով եւ մարզի բնակչության դիմագրաված մարտահրավերներով: Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ ի խնդիր ժողովրդի բարօր կյանքի՝ քաղաքային ու մարզային իշխանությունների եւ թեմի միջեւ առկա համագործակցության, ինչպես նաեւ փոխգործակցության հետագա ծրագրերի մասին:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ «Թռչունյան տուն» դպրոց եւ երեխաների աջակցության կենտրոն, ծանոթացավ հաստատությունում խնամվող երեխաների հետ:

Նորին Սրբությունը եղավ նաեւ Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Գյումրու հայորդյաց տանը, որտեղ տնօրեն Աստղիկ Եդիգարյանի ուղեկցությամբ հանդիպեց տարբեր խմբակներում ուսանող պատանիների եւ մանուկների հետ՝ նրանց բաշխելով իր հայրական օրհնությունն ու գնահատանքը:

1988 թ. երկրաշարժի 30-րդ տարելիցի առիթով, երկրաշարժից տուժած եւ առ այսօր տնակներում բնակվող ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով, Մայր Աթոռի նախաձեռնած սոցիալական նոր ծրագրի շրջանակներում, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր աշխարհասփյուռ թեմերով, դեկտեմբեր եւ հունվար ամիսներին տասը ընտանիքների ընծայեց բնակարաններ. յոթը՝ Գյումրի քաղաքում, երեքը՝ Սպիտակում:

Շարունակությունը՝ էջ 3

Խունկ, աղոթք եւ օրհնություն ննջեցյալ Պատրիարքի լույս հիշատակին

ՄԱՐՏԻ 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը մասնակցեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք երջանկահիշատակ Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի վերջին օծման եւ հուղարկավորության արարողություններին:

Պատվիրակության կազմում էին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Խաժակ արք. Պարսամյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Արարողության ընթացքում Խաժակ արքեպիսկոպոսն ընթերցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վշտակցության խոսքը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյան,

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյան,

Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ հայրեր,

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Մեր սիրելի զավակներ,

Հարգարժան ներկաներ,

Այսօր առ Բարձրյալը՝ հավիտենական կյանքի երանավետ հանգրվան ենք ուղեկցում ի Տեր ննջեցյալ Ամենապատիվ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, որ տարաժամ ավարտեց իր երկրավոր ընթացքը՝ բարի հիշատակ թողնելով հավատավոր հայորդյաց սրտերում:

«Զի եթէ տնկակից եղեաք նմանութեան մահու նորա. այլ եւ յարութեան նորա լինիցիմք» (Հռ. Զ 5),– ասում է առաքյալը Քրիստոսի հավատարիմ հետեւորդների կյանքի ընթացքի ու վախճանի մասին: Հարության ու հավիտենական կյանքի տերունական խոստման մխիթարական այս գիտակցությամբ է, որ լուսահոգի Պատրիարքին ճանապարհում ենք դեպի երկնից լուսեղեն օթեւանը:

Մեսրոպ Պատրիարքը ավանդաշատ Պոլսո հայ համայնքի զավակն էր՝ ծնվելով ու հասակ առնելով պոլսահայ ընտանիքում, դաստիարակվելով եկեղեցանվիրումի ու ազգանվիրումի ոգով: Մեր Սուրբ Եկեղեցուն եւ ժողովրդին իր կյանքն ընծայելու տեսլականով՝ նա մուտք գործեց եկեղեցական ասպարեզ եւ ծառայանվիրումի ուխտ կնքեց՝ իր հոգու սերն ու նվիրումը բերելով հավատացյալ հայորդյաց: Լուսահոգի Մեսրոպ Սրբազանի տարիների վաստակյալ առաքելությունը մեծապես արժեւորվեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հոգեւոր խնամքի ներքո գտնվող հայորդիների կողմից, որոնք, որպես արտահայտություն հարգանքի ու գնահատանքի, նրան ընտրեցին Հայոց Պատրիարք: Լուսահոգի Պատրիարքը կարեւոր ծառայություն իրականացրեց, սպասավորեց երբեմն դժվարին պայմաններում՝ ջանք ու եռանդ ներդնելով, որպեսզի ծաղկուն մնա Հայոց Պատրիարքությունը, շեն լինեն եկեղեցիները, նորոգ առաջընթաց ապրի Պատրիարքության հայորդյաց ազգային-եկեղեցական կյանքը:

«Ո՛չ է մարդ իշխան ոգւոյ, եւ ո՛չ գոյ իշխանութիւն նորա յաւուր մահուան» (Ժող. Ը 8),– ասում է Սուրբ Գիրքը: Դժվարին հիվանդությունը, ցավոք, երկար տարիներ մահճին գամեց Պատրիարք Սրբազանին, եւ նա չկարողացավ օգտակար ծառայությունը շարունակել հավատացյալ իր հոտի համար: Երկրավոր իր ընթացքն ավարտելով՝ նա փոխադրվում է հավերժություն, որտեղ Տերը, Իր անգին խոստման համաձայն, հավիտենական կյանքի երանությունն է պարգեւում Իր հավատարիմ սպասավորներին:

Վստահ ենք, որ Պատրիարքության Մեր սիրեցյալ ժողովրդի զավակները, միասնաբար հաղթահարելով կորստյան ցավը, ամուր պիտի պահեն իրենց միաբանությունը, սերը, համերաշխությունը եւ ձեռնամուխ լինեն մեր Սուրբ Եկեղեցու նվիրապետական Աթոռի՝ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պայծառության գործին, որպեսզի այն շարունակի իր ծառայությունը հավատավոր Մեր ժողովրդին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ծառայասեր հոգեւոր դասին եւ բարեպաշտ Մեր զավակներին, որ միշտ սիրով ու հավատարմությամբ փարված են մեր Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ նախանձախնդիր են, որ Եկեղեցին շարունակի իր առաքելությունն արդյունավորել Մեր ժողովրդի համազգային կյանքի անդաստանում:

Թող երկնից լուսեղեն հանգրվաններում խաղաղությամբ հանգչի հոգելույս Մեսրոպ Պատրիարքը, եւ Ամենագութն Աստված Սուրբ Հոգու մխիթարության բյուր շնորհներով սփոփի բոլոր վշտացյալ սրտերը:

Խունկ, աղոթք եւ օրհնություն ննջեցյալ Պատրիարքի լույս հիշատակին:

Վշտակիր սրտով եւ օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Գյումրի

Սկիզբը՝ էջ 2

Ծրագրին իրենց աջակցությունն են բերել ԱՄՆ արեւելյան եւ արեւմտյան, Գերմանիայի եւ Եգիպտոսի, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի, Հարավային Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմերը եւ Հնդկաստանի հայոց հոգեւոր հովվությունը:

Գյումրի այցելության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անակնկալ այցելեց բնակարան ստացած Մանուկյան ընտանիքին: Շնորհավորելով Մանուկյաններին բնակարանամուտի առիթով՝ Գարեգին Բ Կաթողիկոսն իր օրհնություններն ու բարեմաղթանքները բերեց ընտանիքի անդամներին եւ նրանց հանձնեց բնակարանի վկայականը:

Ընտանիքի կրտսեր անդամներին ընծայելով մանուկների Աստվածաշունչ եւ այլ նվերներ՝ Վեհափառ Հայրապետն ընտանիքին նվիրեց մանրանկար-սրբապատկեր, ապա եկեղեցականաց հետ աղոթք բարձրացրեց առ Աստված՝ Մանուկյան ընտանիքի բարօր եւ խաղաղ կյանքի համար:

Օրվա ավարտին թեմական առաջնորդի եւ եկեղեցականների ուղեկցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Գյումրիի Ս. Հակոբ եկեղեցի: Գոհաբանական աղոթքից հետո Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց ներկա բարեպաշտ հայորդիներին:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

ՄԱՐՏԻ 12-ից 14-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված ժողովը:

Ժողովի նիստերն ատենապետեցին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Խաժակ արք. Պարսամյանը, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը:

Եռօրյա ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցու վարչական, կազմակերպահրավական, կանոնական, կարգապահական, սոցիալական եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչված այլ հարցեր:

Ժողովի սկզբում անդրադարձ կատարվեց մարտի 8-ին վախճանված Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք երջանկահիշատակ Մեսրոպ արք. Մութաֆյանի վերջին օծման եւ հուղարկավորության արարողություններին: Տեղեկացվեց, որ առաջիկա օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը կմեկնի Ստամբուլ՝ մասնակցելու Մեսրոպ Պատրիարքի հուղարկավորությանը եւ սգացյալ ժողովրդին փոխանցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի վշտակցության խոսքը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին Խաժակ արք. Պարսամյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Ազգային-Եկեղեցական ժողովի (ԱԵԺ) գումարման կազմակերպչական աշխատանքների ընթացքի մասին զեկույցով հանդես եկավ ԱԵԺ-ի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Արշակ եպս Խաչատրյանը՝ հանգամանորեն ներկայացնելով ԱԵԺ-ի կազմակերպիչ հանձնախմբի, ինչպես նաեւ օրակարգի հարցերի նախապատրաստման նպատակով ստեղծված յոթ հանձնախմբերի աշխատանքների ընթացքը:

ԳՀԽ-ի անդամները լսեցին նաեւ Մայր տաճարի վերանորոգության ընթացքի մասին զեկույցը: Տաճարի վերանորոգության նախագծի ճարտարապետ Ամիրան Բադիշյանը եւ Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արա Վարդանյանն անհրաժեշտ լուսաբանություններ տվեցին տաճարի ամրակայման եւ վերանորոգության, նաեւ ընթացող աշխատանքներում ծագող նոր խնդիրների մասին: Տեղեկացվեց, որ տաճարի ներքին աշխատանքները ծրագրվում է ավարտել 2020 թվականին:

Նկատի ունենալով Ազգային-Եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքների ծավալը եւ ժամանակատարությունը, ինչպես նաեւ Մայր տաճարի վերանորոգման ընթացքը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, որոշեց Ազգային-Եկեղեցական ժողով գումարել 2020 թ. նոյեմբերի 1–8-ը:

Մայր տաճարի նորոգության պատճառով նպատակահարմար նկատվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 20-ամյակին նվիրված հանդիսությունները եւս անցկացնել առաջիկա տարի:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց Եկեղեցի-պետություն հարաբերություններին, տեղեկացվեց ՀՀ վարչապետի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի մասին, որի նպատակն է առավել զորացնել Եկեղեցի-պետություն գործակցությունը՝ ի նպաստ երկրի հզորացման: Գոհունակությամբ լսելով զեկույցը՝ ԳՀԽ-ի անդամները կարեւորեցին պետության հետ գործակցությունը եւ հաջողություններ մաղթեցին նորակազմ աշխատանքային խմբի աշխատանքներին:

Գերագույն հոգեւոր խորհուրդը զեկույց լսեց Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի ընթացքի վերաբերյալ, որը համակարգվում է «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասո Դավիդյանի կողմից: Տեղեկություններ տրվեցին կատարված աշխատանքի եւ առաջիկա անելիքների մասին: Վերջում Վեհափառ Հայրապետը Գերագույն հոգեւոր խորհրդի անունից գնահատանք հայտնեց համակարգող խմբին՝ ջանադիր ծառայության համար:

Կոմիտաս Վարդապետի եւ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների ծրագիր-առաջարկ ներկայացրեց հոբելյաններին նվիրված միջոցառումների կազմակերպման հանձնախմբի ատենապետ Անուշավան եպս Ժամկոչյանը: Քննարկումների արդյունքում Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց տարվա կտրվածքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ թեմերում կազմակերպել հիշատակի արարողություններ եւ հոգեւոր-մշակութային, գիտակրթական, գեղարվեստական, ճանաչողական միջոցառումներ:

2019 թվականն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է որպես Ընտանիքի տարի: Այս շրջանակներում ժողովականներն անդրադարձ կատարեցին հայ ընտանիքի առջեւ ծառացած արդի խնդիրների հաղթահարման գործում Հայոց Եկեղեցու հովվական առաքելությանը հայրենիքում եւ սփյուռքում՝ որդեգրելով Մայր Աթոռի եւ թեմերի կողմից իրականացվելիք հոգեւոր, սոցիալական, գիտա-ճանաչողական, հովվական, քարոզչական մի շարք ծրագրեր:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին ներկայացվեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2018 թվականի գործունեության տեղեկագիրը:

Շարունակությունը՝ էջ 4

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Մաղաքիա վրդ. Ամիրյանը ծառայության է կոչվել Վիրահայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Աղան աբդ. Երնջակյանն իր ծառայությունը կբերի Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 3

Ժողովականները քննության առան նաեւ Մայր Աթոռի գործունեության ֆինանսական հաշվետվությունը եւ վերստուգիչ հանձնախմբի տարեկան զեկույցը:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով եւ Պահպանիչ աղոթքով:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2018 թվականի գործունեության ամփոփ տեղեկագիրը

2018 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 756 էր, որոնցից 52-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 52-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 28-ը՝ աբեղա, 499-ը՝ քահանա, 131-ը՝ սարկավագ: Անցյալ տարի ձեռնադրվել են 19 ամուսնացյալ քահանա եւ 35 սարկավագ, կատարվել է նաեւ մասնավոր վարդապետության աստիճանների 4 տվչություն: Արտերկրում ուսանող եկեղեցականների թիվը համալրվել է երեքով:

Մայր Աթոռի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1142 աշխարհական եւ հոգեւորական անձ:

Նորին Սրբության օրհնությամբ 2018 թ. փետրվար ամսից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում մեկնարկել է «Քահանայից վերապատրաստման» երեքշաբաթյա ծրագիրը, որին տարվա ընթացքում մասնակցել է 161 եկեղեցական՝ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի թեմերից:

Հոգեւոր-մշակութային ոլորտում կազմակերպվել են մի շարք գիտաժողովներ եւ ցուցահանդեսներ:

Հոգեւոր-կրթական հաստատություններում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանում, Քահանայից պատրաստման եռամյա լսարանում ուսանել է 160 սան:

Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնն անցյալ տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունը նախադպրոցական, միջնակարգ, կիրակնօրյա կրթության ոլորտներում: Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էօռնեկեան հանրակրթական դպրոցի» 35 դասարաններում ուսանում է 519 աշակերտ, «Էօռնեկեան մանկապարտեզ» հաճախում է 42 երեխա: Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում եւ «Դավթյան» օրիորդաց վարժարանում (Հնդկաստան) ուսանում է 76 աշակերտ:

2018 թ. Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց շարքում՝ «Դեպի Հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» կարգախոսի ներքո համահայկական երիտասարդական հավաքը, որին մասնակցել է 20 երկիր ներկայացնող շուրջ 600 եկեղեցասեր երիտասարդ:

Անցյալ տարի Մայր Աթոռի հովանու ներքո գործող 7 հայորդյաց տներ (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոն հաճախել է շուրջ 4000 երեխա, կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ եւ այլ ծրագրեր:

ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդությունում իր ծառայությունն է բերել 61 հոգեւորական, ՀՀ քրեակատարողական 12 հիմնարկներում՝ 10:

Հավատացյալների հոգեւոր կարիքները բավարարելու նպատակով Մայր Աթոռի հրատարակչական բաժնի կողմից լույս է ընծայվել 36 անուն գիրք: Առավել լայն լսարանի համար քարոզչություն է իրականացվել «Էջմիածին» ամսագրի, «Քրիստոնյա Հայաստան» թերթի, ինչպես նաեւ համացանցի, հեռուստառադիո հաղորդաշարերի եւ «Շողակաթ» ու «Լույս» հեռուստաընկերությունների միջոցով:

2018-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է իր առաքելությունը սոցիալական ծառայությունների ոլորտում՝ մասնավոր ուշադրություն դարձնելով հասարակության կարիքավոր խմբերին՝ փախստականներին, սիրիահայերին, ազատամարտիկներին, զոհված զինծառայողների ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, տարեցներին, ուսանողներին եւ հիվանդներին:

Շուրջ 650 ընտանիքի ցուցաբերվել է դրամական եւ նյութական օգնություն՝ 60.496.384 ՀՀ դրամի չափով, անխափան աշխատել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ-ի հովանավորության ներքո գործող 5 բարեգործական ճաշարանները, որտեղ սնունդ է ստանում շուրջ 900 անապահով քաղաքացի:

2018 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական ծառայության գրասենյակի ջանքերով բացվեց «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնը, որտեղ մշտական խնամք է ստանում 12 մանուկ:

Այսու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը սոցիալական ծառայությունների բնագավառում իրականացրել է ընդհանուր 360.070.173 ՀՀ դրամի (երեք հարյուր վաթսուն միլիոն յոթանասուն հազար հարյուր յոթանասուներեք) բարեգործական եւ սոցիալական ծրագրեր, որոնց շարքում աջակցության ծրագրեր հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերին, երկրաշարժից տուժած ընտանիքներին, սահմանամերձ շրջանի 9 քահանաներին, մանկատներին, արյան լեյկոզով տառապող փոքրիկների, հաշմանդամ երեխաների եւ ավտովթարի հետեւանքով զոհված 4 զինծառայողների ընտանիքներին:

Անդրադառնալով թեմական կյանքին՝ տեղեկացվեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում են 33 թեմ եւ 3 հայրապետական պատվիրակություն, 718 եկեղեցի ու վանք, 812 ծուխ եւ ծխական առաքելություն, որտեղ կա 263 կիրակնօրյա դպրոց, նաեւ՝ տիկնանց եւ երիտասարդաց միություններ: Թեմերում 2018 թ. իրականացվել են հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր:

Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում նախորդ տարում օծվել է 18 եկեղեցի, որոնցից 1-ը՝ Արարատյան հայրապետական թեմում, 3-ը՝ Գուգարաց թեմում, 1-ը՝ Սյունյաց թեմում, 1-ը՝ Արագածոտնի թեմում, 1-ը՝ Տավուշի թեմում, 5-ը՝ Արցախի թեմում, 3-ը՝ Վիրահայոց թեմում, 2-ը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում, եւ 1-ը՝ Ուկրաինայի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Վահան Տերյանի «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԽՈՐՀՈՒՐԴԸ

(բանաստեղծի ծննդյան 134-ամյակի առթիվ)



Սկիզբը՝ թիվ 5

ԲԱՆԱՍՏԵՂԾՆ իր ժողովրդին հորդորում է պահել եւ պահպանել հայկական հարուստ մշակույթը, ստեղծել հոգեւոր հայրենիք: Ցարիզմի հայահալած քաղաքականության պայմաններում նման հայրենիքի ստեղծումն անհրաժեշտություն էր առաջին հերթին հոգեւոր արժեքների պահպանման տեսանկյունից:

Տերյանը հավատում է իր ժողովրդի ներքին ուժին, հավատում է, որ նա կարող է ստեղծել հոգեւոր Հայաստան: Դարերն ու հարյուրամյակներն ապացուցել են իր ժողովրդի զորեղ ուժը: Հայը միշտ էլ կարողացել է իր ստեղծած արժեքներով պահպանել իր ինքնությունը, շարունակել երթը պատմության դժվարին քառուղիներով: Պատմությունը կարող է փաստել իր ազգի հոգեւոր ավանդների մասին: Մշակույթն ու գիրը բազմաթիվ անգամներ զենքի նման պաշտպանել են հայ ժողովրդին՝ դառնալով նրա գոյության երաշխիքն ու ինքնության կռվանը: Մեր թշնամիներին չի հաջողվել սրի քաշել ժողովրդին, քանի որ նրանց դեմ դուրս է եկել ազգային արժեքներով տոկուն հայ մարտիկը:

Տերյանի առաջադրած գաղափարներն ու հրամայականներն այսօր էլ արդիական հնչեղություն ունեն: Ներկայումս կատարվող հասարակական բուռն իրադարձությունները չպետք է աննկատ անցնեն մեզ համար: Պետք է հետեւողական լինենք՝ ըմբռնելով դրանց հեղաշրջիչ նշանակությունը: Դատարկ խոսքեր են մեր՝ փոքր ազգ լինելու բնորոշումները: Ազգի մեծությունը հոգեւոր արժեքներով է որոշվում: Եթե այսօր հայության սիրտը պարզված է դեպի ապագան, եթե նա հավատում է իր գալիքին, ապա իր հայացքը ոչ միայն Վան ու Էրզրում պիտի դարձնի, այլեւ իր ներսը՝ հոգու խորքը՝ տեսնելու համար, թե կա արդյոք իր մեջ այն ամենը, ինչ կենդանություն է տալիս նյութական Հայաստանին: Եթե նման հավատ կա, ապա հայը ձեռքը ձեռքին ծալած չի նստի եւ ձեռնամուխ կլինի հոգեւոր հայրենիքի ստեղծմանը: Մեր հոգեւոր հայրենիքը մի ավերված երկիր է. նրա ավերված շենքերը կանգնեցնելու համար անձնվիրություն ու բուռն ոգեւորություն է հարկավոր. «Քննեցեք ձեր սիրտը եւ նայեցեք, թե կա արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր այդ հոգեւոր Հայաստանը, եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար… Նա չի կենդանանա, նա հոգով միայն կարող է կենդանի լինել…» *(նույն տեղում, էջ 116–117)*:

Բանաստեղծի նույն մտահոգություններն առկա են նաեւ «Երկիր Նաիրի» շարքի բոլոր բանաստեղծություններում: Նաիրին դառնում է հայրենիքի հավաքական խորհրդանիշ, հավաքական կերպար: Դեռ անմարմին, անիրական էր այդ Հայաստանը, բայց շատ փափագելի էր Տերյանի համար: Այդ հայրենիքը դեռ չկար, բայց գրողը երազում էր նրա գալստյան մասին: Անմիջապես հիշում ենք Տերյանի հիշյալ շարքի «Մի՞թե վերջին պոետն եմ ես» *(Վ. Տերյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 249)* բանաստեղծության հետեւյալ տողերը.

Ահով ահա կանչում եմ քեզ
Ցոլա, ցնորք Նաիրի՛...

Նույն շարքի այլ բանաստեղծության մեջ *(նույն տեղում, էջ 244)* կարդում ենք.

Մշուշի միջից,– տեսի՛լ դյութական,-
Բացվում է կրկին Նաիրին տրտում...

Փաստորեն՝ Նաիրին ցնորք է, իղձերի ու երազանքների մարմնացում, Նաիրին նպատակ է՝ անհասանելի ու դյութական տեսիլ՝ պարուրված անսահման մշուշով: Հենց այդ տեսիլ լինելու գիտակցումից էլ ծնվում է բանաստեղի տագնապը. չլինի՞ նոր հայրենիքի տեսիլն անմիջապես անհետանա: Տերյանն ստեղծում է ապագայի հայրենիքի լուսե տեսլականը՝ միաժամանակ երկյուղելով, թե այն կարող է չիրականանալ:

Տերյանի՝ հայրենիքի կերտած կերպարը քաջ հայտնի է «Երկիր Նաիրի» շարքի հետեւյալ բանաստեղծությունից *(նույն տեղում, էջ 243)*.

Չշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք.-
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ,
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ,
Խեղճությունդ խավար ու լուռ,
Աղոթքներդ դառն ու ցավոտ.
Զանգակներիդ զարկը տխուր,
Եվ խուղերիդ լույսերն աղոտ:

Հայրենիքի կերպարը նոր կողմերից է բացահայտվում «Կարծես թե դարձել եմ ես տուն» եւ «Հիշում եմ ինչպես այն ուշ» բանաստեղծություններում: Այս ստեղծագործություններում պատկերվում է հայրենիքի ինքնատիպ գեղեցկության նկատմամբ անսահման կարոտը: Տունդարձի պատրանքը վերադարձի տպավորություն է ստեղծում դեպի մանկությունն ու հեքիաթների նվիրական ժամանակները: Պատրանքը լիակատար է դառնում, երբ արեւը հանգչում է հեռվում, հեքիաթն անվերջ օրորում է, իսկ իլիկը՝ անուշ խոսում:

Ճիշտ է, երբեմն Տերյանին համակում են հուսալքությունն ու տագնապը, թե արդյոք այդ «մեռնող» երկրում «հարյավ» պիտի երգի իր երկրի համար, բայց դրան հետեւում է մեծ հայրենասերի, իր ժողովրդի քաջ զավակի պատասխանը. «Որքան մութը սեւ, այնքան ես համառ»: Սա փաստում է բանաստեղծի անմար հավատն ու երկնելու կոչը եւ այն համոզումը, որ սուրբ է իր երկրի ուղին, եւ վեհ՝ նրա պսակը:

«Երկիր Նաիրի» շարքը նաեւ կոչ է հայրենիքին, կոչ այն աշխարհին, որտեղ մայր կա, սիրած էակ ու հայրենի տուն:

Շարունակությունը՝ էջ 6

ՄԱՇՎԱՆ ՖՈՒԳԱ



Գ. Իշխանության սեւ արկղերը

Սկիզբը՝ թիվ 2, 4–5

ՍԹԱՓ հայացքը կարող է եւ արդարացնել գեներալին, որովհետեւ նա դաժանորեն պատժել էր իր վստահությունը կորցրած դավաճանին: Իսկ փռի մեջ կարմրացված խոճկորի պես սեղանին մատուցելը Մարկեսի ոճի պարզ արտահայտությունն է՝ համեմված չավազանցությամբ ու երեւակայությամբ:

Գեներալի համար սերը հեռու բան է, մոտիկը կիրքն է, որը պալատում սպասուհիների է կռացնում եւ դպրոցից տուն դարձող աղջիկների պառկեցնում: Հետո հեղինակը բարոյական շրջադարձ է անում՝ դպրոցական աղջիկների անունով նրան մատուցում էին նավահանգստի շուրջօրյա թիթեռնիկների:

Միակ եւ օրինական սերը նրա համար Լետիսիա Նասարենոն էր, որը ծերության մթնամշուշ խորխորատներում նրան գրելկարդալ սովորեցրեց: Դրանից հետո գեներալը սովորություն դարձրեց իր առանձին մտքերը գրի առնել թղթի պատառիկներին, դրանք ոլորել ու խցկել կառավարական տան ցանկացած անկյուն: Հետո դրանք պատահաբար գտնում ու կարդում էր եւ վերականգնում հիշողությունը՝ «որպեսզի հիշեր, թե ով է ինքը, երբ հիշողությունն իսպառ կորցներ» (էջ 128):

Ինչպես բուդդայականներն իրենց մանթրաները՝ աղոթքներն էին գլանակում, ինչպես գնչուները բախտի հուշագրերն էին գլանակում եւ թութակների կտուցներով պատահական մեկը հանում՝ որպես բախտագուշակ, այդպես էլ նահապետը լավ խոսքերն էր գրում մի թղթի վրա, գլանակում եւ խցկում որեւէ տեղ, հետո պատահականորեն գտնելիս հիշողությունն արթնանում էր: Թղթե գլանակներն ասես հիշողության պահպանակներ լինեն: Միջանկյալ հիշենք, որ հիշողության հետ կապված մի ամբողջ շերտ կա «Հարյուր տարվա մենություն» վեպում:

Այսպես՝ գեներալը ոլորած թղթերից մեկի վրա գրել էր. «Իմ անունը Սակարիաս է», հետո կարդացել, իրեն օտար էր զգացել այդ անվանը եւ թուղթը պատռել՝ ես ես եմ: Բացառիկ անհատն ինչպե՞ս կարող է որեւէ անուն ունենալ, անուն, որ կարող են նաեւ ուրիշներն ունենալ՝ ես ես եմ եւ վերջ:

Կանացի երկու գլխավոր կերպարներից մեկը գեներալի մայր Բենդիսիոն Ալվարադոն է, մյուսը՝ կինը՝ Լետիսիա Նասարենոն:

Մոր կերպարը ձեւավորվում է շարադրանքի առաջին իսկ էջերից, ամբողջական պատմություն դառնում 4-րդ դրվագում եւ հետո ուղեկից հիշողություններով շարունակվում մինչեւ վերջ:

Բենդիսիոն Ալվարադոն սված, ցնցոտիավոր թափառաշրջիկ է եղել, որը հանում մի կտոր հացի՝ տրվել է աջ ու ձախ: Եղել է գեղեցկատես եւ շատ պարզամիտ: Նրա վարքը փողոցային է, որդու համար՝ սրբազան, որն իրեն միայնակ էր սաղմնավորել եւ միայնակ էր ծննդաբերել: Մինչդեռ մայրը չէր էլ հիշում, թե փախստականներից որ մեկից է ոտքի վրա հղիացել: Ընկերքը խոզերի առաջ են նետել, իսկ նորածնի ձեռքերի ափերը բախտագծեր չեն ունեցել, ինչը թագավոր դառնալու նախանշան էր:

Մոր մահը զգրելի է՝ թիկունքի խոցերի մեջ ճիճուներ ու նեխահոտ: Բայց որդին առանց խորշանքի խնամում է նրան, ամեն ինչ անում անձամբ՝ առանց անգամ անհրաժեշտ զգուշավորության:

Մոր մահից հետո հանկարծ նկատում է, որ ձեռքը կրծքին սեղմած նրա պատկերը նույնությամբ դրաշմվել է սավանին: Ասես Քրիստոսի պատանքը լինի: Դա հետո Վատիկանից եկած պապի նվիրակը պետք է կասկածի ենթարկեր եւ դրա համար գեներալի հրահանգով անարգվեր, բայց ի վերջո նա հասնում է նպատակին եւ մորը սրբադասում: Վերաբերմունքը. «Իսկ պապը թող մեկընդմիշտ ականջին օղ անի, որ ինքը պապ է Հռոմում <…>, իսկ էստեղ ես էն եմ, ինչ կամ»: Երախտապարտ որդին հատուկ հրամանագրով «հայրենյաց մեծ մայր» է հռչակում սիրասուն ծնողին եւ տարածում պաշտամունքը:

Պաշտոնապես հայտարարված հարյուրօրյա սգի ընթացքում մոր դագաղը նվագախմբի ուղեկցությամբ շրջում են ամբողջ երկրով մեկ՝ «որպեսզի ոչ ոք անմասն չմնար նրա հիշատակը հարգելու պատվից» (էջ 133): Եվ նրան համոզում են, որ ամբողջ ճանապարհին սառույցով պատված դիակը ոչ միայն ամենեւին չքայքայվեց, այլեւ հանգուցյալն աչքերը բացեց. «Տեսանք, որ նրա բիբերը բյուրեղի պես վճիտ էին, հունվարյան ընձախոտի պես մոռ ու լուսնաքարի պես ջինջ, եւ անգամ ամենաթերահավատներս տեսանք, թե ինչպես դագաղի ապակին պղտորվեց նրա շնչի գոլորշուց, եւ ինչպես նրա ծակոտիներից կենդանի ու անուշաբույր քրտինք բխեց, եւ տեսանք, թե ինչպես ժպտաց նա» (էջ 135–136): Քայքայման պատկերը վերածվում է հարության, հրաշք է կատարվում՝ մշտամուլ ջորիները ծնում են, անապատում ծաղիկներ են աճում, խուլուհամրերը խոսում են: Քրիստոնեական հրաշապատում:

Վերջում էլ պարզվում է, որ մոր անունն ամենեւին էլ Բենդիսիոն Ալվարադո չի եղել, որտեղ Բենդիսիոն թարգմանաբար նշանակում է օրհնություն, որովհետեւ դա իրենց կողմերի անուն չէ: Կարեւորը գեներալի կամքն է, որ ներկայանում է որպես ժողովրդի կամք: Ըստ այդմ՝ «Բենդիսիոն Ալվարադոյի քաղաքացիական սրբությունը հռչակվեց, նրան ազգի հովանավոր սուրբ, տառապյալների ամոքիչ, թռչունների տիրուհի կոչումներ շնորհվեցին, եւ նրա ծննդյան օրը ազգային տոն հայտարարվեց…» (էջ 153–154): Սույն հրամանագրով նա պատերազմ էր հայտարարում Մայր Աթոռ Վատիկանին: Այսպես դրվագ առ դրվագ հեղինակը խորացնում է գեներալի ծաղրը, ամեն ինչ լուրջ է, պետության, իշխանության անունից, բայցեւ՝ ծաղրուծանակ, որ վերածվում է սպանիչ գրոտեսկի:

Պարզունակ այս կինը, մեկ անգամ որդուն տեսնելով երկրի ղեկավարի զինվորական հագուկապի մեջ եւ հպարտանալով նրանով, դիվանագետների առջեւ բացականչել է. «Եթե իմանայի, որ տղաս հանրապետության նախագահ կդառնար, դպրոց կուղարկեի նրան…» (էջ 51): Այս խայտառակությունից հետո մորը հեռացնում են պալատից եւ պահում քաղաքամերձ առանձնատան սենյակներից մեկում:

Շարունակությունը՝ էջ 7

ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

«ԳԻՐՔ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ»

ԳԼԽԱՎՈՐԸ

ԺՈՒԿՈՎ-ԺԱՄԱՆԱԿՈՎ մի տարօրինակ մարդ է ապրել. մարդ, որը կորցրել էր «գլխավորը»: Մեծահարուստ էր եւ ուներ այն ամենը, ինչ կարող է մարդ իր համար ցանկանալ, այդուհանդերձ, մի բան կար, որը նա չուներ ու որի անունն իսկ չգիտեր: Նա այնքան բանի էր ձեռնհաս. գրեթե ունակ ամեն ինչի, սակայն չգիտեր մի բան, որին կարելի կլիներ ձգտել, եւ կյանքը հաչս նրա անիմաստ ու մեռյալ էր թվում: Նրան ոչինչ չէր ուրախացնում, եւ տակավ առ տակավ իր հարստությունն անտանելի բեռ էր դառնում: Այդ ժամանակ նա գնում է մի պառավ կնոջ մոտ, որը հրե լեռան քարայրում քնած՝ խնամքով փայփայում էր իր հինավուրց իմաստությունը, եւ պատմում իր դժբախտ վիճակի մասին:

«Գնա՛ մեծ աշխարհ,– ասում է նրան պառավը,– որոնի՛ր կորուսյալը. քո դժբախտությունը մեծ է, քեզ պակասում է գլխավորը, եւ քանի դեռ դա չես գտել, կյանքը քեզ համար ցավ ու տառապանք կլինի»: Եվ դժբախտը որոնումների ճամփան բռնեց:

Սույն հեքիաթը մտաբերում եմ ամեն անգամ, երբ մտորում եմ ժամանակակից աշխարհի եւ նրա հոգեւոր ճգնաժամի շուրջ: Որքա՜ն հարուստ է աշխարհն իր նսեմ բարիքներով եւ այսպես էլ հա կհարստանա ու կհարստանա: Տարածությունը կհաղթահարվի, օդը կնվաճվի, մատերիայի խորհրդավոր հատկությունները կբացահայտվեն ու կհնազանդեցվեն, անհասանելիները հասանելի կդառնան, չլսվածները՝ լսելի: Օրավուր մարդու տրամադրության ներքո նորանոր գործիքներ, միջոցներ ու հնարավորություններ կդրվեն: Բայց գլխավորը կբացակայի:

«Ինչպես» երկրային կյանքն անկասելի ու հաջող զարգանա, երբ երկրային կյանքի «ինչի համար»-ն աննկատ կորել է: Այո՛, աննկատ, որովհետեւ հոգեւոր ցրվածությունը սոսկ մի քանի դար է տեւել: Ինչպես, ասենք, ցրվածությամբ տառապող մարդու պարագայում, որը շախմատ խաղալիս բարդ ու բազմաքայլ կոմբինացիա է մշակել եւ արդեն կիսով չափ այն իրագործել է, սակայն հանկարծ մոռանում է խաղի պլանը: «Լավ: Բայց ինչո՞ւ եմ ես դա ձեռնարկել: Իրականում ի՞նչ էի ես այդու ցանկանում անել»:

Ժամանակակիցների մեծամասնության համար սույն հարցը գիտակցության սեփականություն չի էլ դառնում: Նրանք ոչինչ չգիտեն «կյանքի ինչի՞ համար»-ի մասին, ինչպես եւ չեն նկատում իրենց տգիտությունը: Նրանք ոչ մի պատասխան չունեն, նույնիսկ չեն էլ նկատում պատասխանի բացակայությունը: Կորուսյալը, հավանաբար, կարելի կլիներ գտնել, սակայն նախ պետք է նշմարել նրա բացակայությունը. չէ որ միայն այդժամ հնարավոր կլինի ձերբազատվել դժբախտությունից, հնարավոր կլինի իրականացնել որոնումները:

Արժի հիշել վերջին հարյուրամյակի բնագիտական եւ տեխնիկական հայտնագործությունները: Գոլորշի, էլեկտրականություն, մանրէների բուծում, գազ, երկաթբետոն, ինքնաթիռ, ռադիո, հավանաբար, ատոմի մոտալուտ տրոհում, եւ դեռ ով գիտի, թե ինչեր: Ինքնին բավական է եւ չափից ավելի բավական է՝ ինչ-որ մեծ բան ստեղծելու համար: Սակայն այս ուղիներով ընթանալը ենթադրում է համապարփակ խանդավառված, նպատակասլաց ու հեռատես գիտակցություն, արվեստի վիթխարի հոգեւորդաստիարակչական ուժ: Կյանքն առանց իմաստի դառնում է առավել վտանգավոր, քան երբեւէ: Ստեղծագործական հնարավորությունները կարող են համատարած ավերածությունների գործիքների վերածվել: Չէ որ դրանք ինքնին ո՛չ «լավն» են , ո՛չ էլ՝ «վատը». դրանք սոսկ հզոր, անորոշ «հնարավորություններ» են, հարստացված ներուժ, ինչպես չլրացված, բայց ստորագրված լիազորությունների վկայական կամ էլ վտանգի տեսանկյունից հետազոտված քնած հրաբխային լեռ՝ անկանխատեսելի ու քմահաճ ըստ ամենայնի:

Ժամանակակից մարդկությունը գեթ անսխալ ինտուիտիվ կերպով պիտի զգա, թե «ուր» է ինքն ընթանում, «ինչի համար» են նրան ընձեռված այս հնարավորությունները, «ինչպես» պետք է դրանք օգտագործել, կիրառել, որպեսզի ստեղծագործական շավիղը ավերակների ուղու չվերածվի: Նա պարտավոր է նաեւ իմանալ, որ միմիայն հոգեւորապես կայացած, ազնիվ ցանկություններով առաջնորդվող ու կարգապահ մարդն է ի վիճակի չչարաշահելու այդ հարստացված ներուժը: Մի՞թե երեխային թույլ կտան վառոդի հետ խաղալ: Չարաբաստիկ բա՞ն չէ արդյոք, երբ կախարդի աշակերտը ոգիների հմայությամբ է զբաղվում, բայց չգիտի՝ ինչպես դրանցից ազատվել: Ի՞նչ կպատահի, եթե հոգեւոր արմատներից կտրված եւ բարոյապես սանձարձակ «աշխարհը նվաճողների» մի խումբ մարդիկ սկսեն պրպտել արդի քիմիայի, տեխնիկայի եւ մանրէաբանության միջոցները:

Ժամանակակից մարդու դժբախտությունը մեծ է. նրան պակասում է գլխավորը՝ կյանքի իմաստը: Նա պիտի որոնումների ուղի ելնի: Եվ քանի դեռ չի գտել գլխավորը, փորձանքներն ու վտանգներն ավելի ու ավելի հաճախ նրան կդարանակալեն... Մինչեւ Քրիստոսի հայտնությանը չդառնա եւ վերստին չդավանի ՆՐԱՆ:

ՄԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ԱՅՍ աշխարհ եկող ամեն ադամորդի ծպտյալ կերպով ծանր փորձության է ենթարկվում: Ոչ ոք նրան այդ մասին ոչինչ չի ասում. նա ինքն անձամբ պիտի վերապրի կացությունը, իմաստավորի այն ու գլուխ հանի դրանից: Հաճախ բավական երկար ժամանակ է անցնում մինչ դա տեղի կունենա. հաճախ էլ ըմբռնողությունը չափազանց ուշ է գալիս, եւ այդժամ մարդը դառնում է անօգնական ու կորած-մոլորած:

Շարունակությունը՝ էջ 6

Շահան Շահնուրի մի դասմվածքի գրական-գաղափարական մեկնումը

Սկիզբը՝ թիվ 5

ԵԼՆԵԼՈՎ այդ եւ այլ հարցերի հրատապությունից՝ Շահնուրն իր վերոհիշյալ պատմվածքը վերամշակեց, որը շատ ավելի ծավալուն դարձավ (նախորդից գրեթե չորս անգամ ավելի), եւ տպագրեց «Բաց տոմարը» գրքում *(Շահնուրը ծրագրել էր իր պատմվածքը զետեղել 1949-ին կազմած «Անտիպ էջեր» գրքում. պիտի լույս տեսներ Կիպրոսում, սակայն այդպես էլ չտպագրվեց)*: Այն լույս տեսավ 1971 թվականին: Կարելի է ասել, որ Շահնուրը մի շարք էական փոփոխություններ է կատարել:

Պատմվածքի երկու տարբերակներն էլ գրված են առաջին դեմքով: Հեղինակն իր հերոսին տրված Էմիլ անվամբ հանդես է գալիս որպես թե դեպքերի շարադրող, թե այդ դեպքերն ու երեւույթներն իր խոհերի ու դատողությունների միջով անցկացնող վերլուծաբան:

Պատմվածքը փոփոխության է ենթարկվել հենց սկզբից. եթե առաջին տարբերակն ուներ «Կարեւոր ձօն» վերատառությամբ բնաբան, որտեղ հեղինակն իր գործն ուղղում էր… բոլոր այն *«անհանդարտ ու դիւրաբորբոք գրիչներուն՝ որ կը պատասխանեն՝ ամէն կանչի…» (տես նշված հանդեսը, էջ 8)*, ապա 1971-ի հրատարակության մեջ «Կարեւոր ձօնը» ամբողջովին հանվել է, եւ պատմվածքը կրում է ընծայական՝ *«Բարեկամիս՝ Գուրգեն Մահարիի յիշատակին» (տես Շահնուր Շ., Բաց տոմարը, Փարիզ, 1971, էջ 7)*: «Ձօնում» խտացված միտքը՝ *«ամէն կանչի»* արձագանքելու պատրաստակամությունը, ողջ պատմվածքի ընթացքում, իհարկե, ենթակա է մնում մերժման:

Եթե առաջին տարբերակում հեղինակը լոկ տալիս է հերոսի անունը՝ Էմիլ, երկրորդում ծավալուն մեկնաբանությամբ *«բացատրում»* է գործատերերի կողմից գաղթական հայ Էմիլին տրված տարանվանումների՝ Ժան, Փիեռ, Առման, Ռոպեռ, պատճառը. ֆրանսիացիները բուն վավերական անունն արտասանում են այնպես, *«ինչպես կարելի չէ գրել եւ ոչ մէկ լեզուով» (էջ 7)*, դրանով իսկ մի կողմից ընդգծելով այն բնական հակասությունը, որ կա գաղթական հայի եւ տեղաբնակ մարդկանց միջեւ, մյուս կողմից՝ համակերպական այն պահվածքը, որ բնորոշ է Էմիլի տեսակի մարդկանց:

Պատմվածքի երկու տարբերակում էլ Էմիլին տրված աշխատանքային առաջադրանքը նույնն է՝ երեխաների համար պատրաստել մեխանիկական գործիք՝ *«սինեմա մը»*, եւ հերոսն իր օգնական բանվորների հետ *«ջարդում»* է հավաքվածների հետաքրքրասիրությունը: Առաջին տարբերակում Շահնուրը ոչ մի խոսք չի ասում հանդիսատեսների եւ, առավել եւս, նրանց հետաքրքրասիրությունը *«ջարդելու»* մասին: Մինչդեռ վերամշակված տարբերակում գրողն այլ ծավալումներ է տվել իր խոսքին: Շահնուրի գրելաոճին առհասարակ շատ բնորոշ են մտքի թռիչքները, որոնք նա հաճախ կատարում է իր պատումից *«շեղվելով»*՝ ելնելով արտահայտած որեւէ նախադասությունից, բառակապակցությունից եւ անգամ բառից: Այս պատմվածքում էլ բավականին շատ են նման օրինակները: Գործածված «ջարդ» բառը նրան մղում է շատ ավելի ընդհանրական ու խորքային այլ ասելիք-եզրահանգման, որն ուղղակի առումով առնչվում է հայ ազգային ու քաղաքական պատմությանը. *«Ջարդը չի լուծեր ո՛չ մէկ հարց… կը ստեղծէ նորեր» (էջ 9)*:

Վերամշակված տարբերակում վերոնշյալ հատվածից ընդամենը երկու պարբերություն հետո Շահնուրը նորից է *«հեռանում»* իր խոսքից՝ դարձյալ *«շեղվելով»*, իսկ ավելի ստույգ՝ պարզաբանելով մանուկների համար կառուցած իր ձեռակերտ շինությունը՝ այս անգամ հարցը շաղկապելով արվեստի էության հետ. *«Ի՞նչ էր: Ինչպէ՛ս կ՚ուզէք որ նկարագրեմ շինութիւնը, երբ չեմ հաւատար նկարագրականներու փոխանցելի զօրութեան»* (էջ 9):

Բուն շարադրանքից հեղինակային հեռացումները միայն այս կամ այն բառի կամ արտահայտության հետ չեն կապվում: Այդպիսի առիթ է ընծայում նաեւ ներկայացվող պատկերը կամ այն նյութը, որի մասին խոսում է գրողը: Առաջինի վառ օրինակ է պատմվածքի նախնական տարբերակում Լյուքսեմբուրգի պարտեզում կանգնեցված գրական գործիչների արձանների հպանցիկ պատկերը. *«Մառի Ըսթիւարթ եւ Ժորժ Սան կռնակնին դարձուցին մեզի, սակայն իմ երկու սիրականներս՝ Սթենտալ ու Ֆլոպէր հետեւեցան մեր քրտինքներուն, իրենց աչքին պոչով» («Մենք» հանդես, Փարիզ, 1931, էջ 8)*:

Երկրորդ տարբերակում Շահնուրը գրում է Ֆրանսիայի *«հնադարեան»* թագուհիների *«առասպելական բամբասանքի»* մասին, որը *«…ազգի մը պատմութեան ենթահողն իսկ է»*: Սակայն ըստ Շահնուրի՝ *«բանաստեղծներն ու վիպասաններն» «ազգի մը պատմութեան»* տեսանկյունից *«աւելի վտանգաւոր»* են, քան իշխանավորներն ու թագուհիները:

Շարունակությունը՝ էջ 8

Վահան Տերյանի «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԽՈՐՀՈՒՐԴԸ



Սկիզբը՝ էջ 4

Այդ ամենը շնչում ու ապրում են հայրենիքի նկատմամբ անսահման սիրով: Ինչպես Շամիրամը, այնպես էլ մյուս գայթակղությունները, օտարությունն ու կախարդանքները չեն կարող հեռու պահել գրողին իր հայրենիքից: Անգամ հեռուներում նա մշտապես երգել է հայրենի երգերը, սրտում վառ պահել «նոր հայրենիքի» տեսլականը:

Նաիրյան երկրում շատ վերքեր ու վարդեր են բացվել արնոտ: Ոչ մի տեղում, ոչ մի վայրում մարդկային դաշույնն այդքան քինոտ ու չար չի եղել: Չնայած այդ ամենին՝ ժողովուրդը շարունակել է ապրել եւ արարել: Ու իր ստեղծած արժեքներով պարտավոր է կերտել իր նոր ու վերածնված հայրենիքը: Անպարտ է մեր ժողովուրդը՝ իր անբեկանելի հավատով, իր ստեղծագործ մտքով ու ձեռքով, իր արդարասեր ու մարդասեր հոգու ազնիվ մղումներով: Այն, ինչ հայրենիքի հոգին ու սիրտն է, նրա համար թանկ է եւ անուրանալի:

Մեզ հոգեւոր հայրենիք է պետք. ահա գրողի ցանկությունը, երազանքը: Ինչո՞ւ, որովհետեւ դարերի ընթացքում մենք զրկվել ենք նյութական Հայաստանից, մեր երկիրը բազում անգամներ հայտնվել է օտարի լծի տակ, եւ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է իր ազատության ու անկախության համար, թշնամուն իր երկրի սահմաններից հանելու համար: Չնայած այս ամենին՝ հայ ժողովուրդը շարունակել է գոյատեւել, շարունակել է ապրել եւ արժեքներ արարել: Ժողովրդին այդ արգելքներն ու խոչընդոտները հաղթահարելուն օգնել են իր իսկ ստեղծած արժեքները՝ գիրը, գրականությունը, արվեստը, մշակույթը: Թշնամուն երբեք չի հաջողվել ընկճել հայ ժողովրդի կամքն ու հոգին: Այս ամենից դաս քաղելով՝ պետք է հասկանալ, որ նյութական արժեքներից կարելի է հեռանալ, բայց հոգեւոր արժեքներից՝ երբեք: Հոգեւոր արժեքների կորուստն ինքնաոչնչացման կտանի ազգին՝ առանց փրկության որեւէ հույսի: Ուրեմն առանց հոգեւոր հայրենիքի գաղափարի, առանց նյութական արժեքների ստեղծման՝ ազգը չի կարող լուծել կեցության հարցերը: Եվ նյութական ցանկացած խնդրի լուծում այդ դեպքում դատապարտման կարժանանա: Ահա հոգեւոր հայրենքի ստեղծման ու պահպանման կարեւորությունը, հայրենիքի մասին մի առասպել, իսկ դրա նպատակը՝ հոգեւոր արժեքների զարգացումն ու պայծառ ապագայի կերտումը: Այսպիսի ներքին հավատ է անհրաժեշտ մեր մտավորականությանը եւ առհասարակ ժողովրդին, մեզանից յուրաքանչյուրին: Այդ հավատի առկայության պայմաններում հոգեւոր Հայաստանի գաղափարը մարմին կստանա, կենդանի կլինի հայրենիքը գոյության հավերժ շղթայում:

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

«ԳԻՐՔ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ»

Սկիզբը՝ էջ 5

Խնդիրը ձայնում է. ըստ գոյության հիմնարար սկզբունքի՝ դու, ինչպես եւ բոլոր մարդիկ, միայնակ ես աշխարհում. դու պիտի հասկանաս քո մենությունը, ընկերանաս նրա հետ եւ հոգեւորապես հաղթահարես այն. չէ որ նա կուղեկցի քեզ մինչեւ կյանքիդ վերջին օրը, սակայն բնավորությունդ, շնորհիվ նրա, զորություն, արժանապատվություն ու բարություն ձեռք կբերի:

Միայնակ է այս աշխարհ գալիս մարդը՝ շնչել պահանջող տառապանքի արձակած առաջին ճիչով. միայնակ է այս աշխարհը լքում նա՝ վերջին շնչով փորձելով ինչ-որ բառ արտաբերել: Երբեմն այնքան շատ բան է արվում նրա համար, իսկ նա այդպես էլ միայնակյաց է մնում՝ իր իսկ մարմնի խցում բանտված: Այն ամենը, ինչ նա հընթացս իր կյանքի այս բանտախցում զգում է, ընկալում, զգալով ճանաչում, այն, ինչի տենչում է, ինչի մասին խորհրդածում, ոչ ոք չի կարող վերապրել այնպես, ինչպես ինքը. այն ամենը, ինչ իր միայնության մեջ ընդունում է, որոշում, իրագործում, զոհողությամբ ի կատար ածում, վերապրում եւ անքնության, հիվանդության, հոգսերի, անհաջողության, հուսահատության մեջ քաշում, միմիայն ինքը գիտի: Կյանքի ամենայն նշանակալից իրադարձություն՝ առաջին սիրուց մինչեւ ծնողների մահը, ամենայն կարեւոր որոշում, իր ուսերին դրված ամենայն պատասխանատվություն, ամենայն կսկիծ ու վիշտ նրան զգալ են տալիս յուր մենակությունը: Սոսկ սակավաթիվ մարդկանց է վիճակված եղել վերապրել ծայրահեղ միայնությունը՝ ծայրահեղ սուր իրավիճակում՝ խռովահույզ ծովում, լռակյաց լեռներում, երեկվա մարտի դաշտի մոռացության մեջ, բանտախցում՝ իր հոգեկան ու հոգեւոր միայնությունն ըմբռնելու համար: Սույն ցմահ միայնությունը ծանրածանր բեռ է, բայց ընդսմին նաեւ՝ մեծ բարիք:

Իր մենավորությունը գիտակցելուն պես՝ մարդը հարց է տալիս. «Ո՞վ կօգնի ինձ»: Ի պատասխան հնչում է. «Ես ինքս պիտի օգնեմ ինձ»... Ահա այսպես դրվում է բնավորության առաջին քարը: Պատասխանը նաեւ ձայնում է. «Որքան առավել հավատարիմ լինեմ Երկնային Տիրոջը, այնքան անխափան կհասնի ինձ Նրա օգնությունը»... Ահա այսպես դրվում է կենդանի հավատի առաջին հիմնաքարը: Միայնության մեջ մարդը գտնում է ինքն իրեն, իր բնավորության զորությունն ու կյանքի սրբազան ակունքը:

Իսկ երբ մարդը վերահասու է լինում ուրիշի միայնությանը, այսինքն՝ նրան, ինչ յուրաքանչյուրն ապրում է իր իսկ անձի մեջ ամփոփված, սակայն տակավին միայնության բեռին ու բարիքին հասու չեղած, ապա դա արդեն կարեկցանք ու սեր է, որոնցով մենք տոգորվում ենք՝ կարեկցանքով տկարի եւ սիրով ուժեղի նկատմամբ: Այդժամ նա ասում է. «Ես օգնության ձեռք կմեկնեմ նրանց: Եղբայրնե՛ր, ես կօգնեմ ձեզ, քանի որ դուք միայնակ եք, իսկ ես քաջատեղյակ եմ դրա դառնությանն ու խաղերին»: Մենությունը ճաշակած մարդը գտնում է իր միայնակ տառապյալ եղբորն ու օգնում նրան: Եվ հենց աստ է, որ ծնվում են հոգեւոր սերը, եղբայրությունն ու զգացմունքների ճշմարիտ միաբանությունը:

Մեզ տրված չէ ձերբազատվել միայնությունից: Սակայն բոլորս էլ կոչված ենք արժանապատվորեն ու հավատով կրելու մեր միայնությունը եւ, սիրելով ու օգնելով, ուրիշի միայնությունը դարձնելու տանելի, պատվարժան ու հոգեւոր:

Սա է մխիթարությունը... Այսպես եւ միմիայն այսպես ձեռնհաս կլինենք հաղթահարելու միայնությունը. մենք՝ միայնակ ադամորդիներս՝ հայացքներս դեպի վեր ուղղելով ու իրար օգնելով:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

Դմիտրի Նալբանդյանի ստեղծագործական ժառանգությունը



ՀԱՅԿԱԿԱՆ կերպարվեստում նշանակալից ավանդ ունի Դմիտրի Նալբանդյանը: Նա այն նշանավոր սովետահայ նկարիչներից էր, որի ստեղծագործությունները բարձր գնահատվեցին խորհրդային իշխանությունների կողմից:

Դմիտրի Նալբանդյանը ծնվել է Թիֆլիսում 1906 թ. սեպտեմբերի 15-ին: Ուսանել է ռուսական գիմնազիայում, որտեղ էլ նկարչության ուսուցիչը նկատում է տղայի նկարչական ընդունակությունները: Ծնողներն ամեն կերպ խրախուսում էին որդուն, որ շարունակի զարգացնել իր նկարչական ունակությունները: Դմիտրիի հայրը որոշում է նրան տալ լավ կրթության, սակայն մահանում է, եւ որդին ստիպված է լինում աշխատել շինանյութերի գործարանում՝ որպես բանվոր՝ ընտանիքի ապրուստն ապահովելու համար: Այնուամենայնիվ 1922 թ. պատանի Դմիտրին ընդունվում է նկարչական ուսումնարան: Դմիտրի Նալբանդյանի՝ որպես նկարչի ձեւավորման գործում լուրջ դեր է խաղացել Թիֆլիսի գեղարվեստի ակադեմիան, որտեղ նա ուսանել է 1924–29 թթ.: Նրան դասավանդել են հայտնի նկարիչներ Ե. Լանսերեն ու Ե. Թադեւոսյանը: Վերջիններս օգնում են իրենց շնորհալի սանին հասկանալ արվեստի վեհ նպատակները: Նրանք նաեւ փորձում են Դմիտրիի մեջ սեր արթնացնել պերեդվիժնիկների արվեստի հանդեպ: Հաջողությամբ ավարտելով ակադեմիան՝ երիտասարդ արվեստագետը 1930-ականների սկզբներին տեղափոխվում է Մոսկվա: Այդ տարիներին նա առիթ է ունենում շփվելու Դ. Մորի, Ա. Գերասիմովի, Ս. Մերկուրովի, Ի. Գրաբարի, Պ. Սոկոլով-Սկալի, Պ. Ռադիմովի եւ հայտնի այլ վարպետների հետ: Շփումն այս մարդկանց հետ շատ կարեւոր էր նկարչի ստեղծագործական աճի համար: Նալբանդյանը համառորեն փնտրում էր իր ճանապարհն արվեստում: Նա դիմում է արդի եւ պատմահեղափոխական թեմաներին: Եռանդուն կերպով աշխատում է ոչ միայն գեղանկարչության, այլեւ գրաֆիկայի ասպարեզում: Նալբանդյանը նաեւ նկարում է պաստառներ եւ ամսագրեր

ձեւավորում: Նկարիչն ակտիվորեն մասնակցում է 1930-ականներին կազմակերպված ցուցահանդեսներին, մասնավորապես՝ «ՌԿԿ-ի եւ Ռազմածովային նավատորմի XX-ամյակը» (1938 թ.) եւ «Սոցիալիզմի ինդուստրիա» (1939 թ.) մեծ ցուցահանդեսներին: Գիտակցելով, որ ինքը տակավին չունի բավարար փորձ՝ իր ստեղծագործական մտահղացումներն իրականացնելու համար, շարունակաբար այցելում է թանգարաններ եւ ուսումնասիրում ռուսական ու համաշխարհային դասական գեղանկարչության լավագույն նմուշները: Նալբանդյանը երբեւէ չի կրկնօրինակել հին վարպետների աշխատանքները: Նա խորապես ընկալել է հեղինակավոր արվեստագետների գեղանկարչական գործերը, գիտակցել նրանց վարպետությունը եւ փորձել տիրապետել գեղանկարչական պլաստիկայի հարուստ զինանոցին: Նա իր ավագներից սովորել է ստեղծել ամբողջական եւ բոլոր առումներով ավարտուն գործեր: Միեւնույն ժամանակ Նալբանդյանին հետաքրքրում էին բացօդյա գեղանկարչության մոտեցումները: Այդ իսկ պատճառով նա շատ է աշխատում բնանկարային եւ ժանրային էտյուդների վրա: Նա ջանում է փոխանցել բնօրինակի գունային ողջ հարստությունը բաց երկնքի ներքո: Նկարիչը նաեւ հաջողությամբ արտահայտում է տոնային ու գունային ճշմարիտ հարաբերությունները: Այդ առումով ուշագրավ է արվեստագետի «Դեպի Ռիցցա տանող ճանապարհը» (1935 թ.) կտավը, որը կատարված է երկնագույնի եւ արծաթագույնի նրբերանգներով: Նալբանդյանն իր կտավներում պատկերում է բնության խստաշունչ գեղեցկությունը՝ մշտապես խուսափելով արտաքին էֆեկտներից եւ հավելյալ հուզականությունից: Պաստոզային եղանակով նկարելը նրան հնարավորություն էր տալիս առավել ընդգծելու, ասենք, լեռնային մակերեւութապատկերը եւ կամ լեռնային գետի սրընթաց հոսանքը: Հետագայում նկարիչը դիմում է այնպիսի մոտիվների, որոնցում մարդն ու բնությունը գտնվում են ներդաշն միասնության մեջ:

Մեծ հայրենականը մի տեսակ ստեղծագործական փորձաքննություն դարձավ սովետական բոլոր նկարիչների համար: Պատերազմի տարիներին Դմիտրի Նալբանդյանը բնակվում ու ստեղծագործում է Հայաստանում, մերձավոր կապեր հաստատում հայաստանցի նկարիչների հետ: Նա ակտիվորեն մասնակցում էր ցուցահանդեսներին, ինչպես նաեւ մշակութային եւ հասարակական կյանքին:

Նալբանդյանի վրա խոր տպավորություն թողեց արեւառատ Հայաստանի բնությունը: Նա նաեւ սիրեց հայաստանցի աշխատավոր մարդկանց: Երեւան գալուց անմիջապես հետո նկարիչը զբաղվում է ագիտմասսայական արվեստով: Նկարիչը, օգտագործելով գրաֆիկական ժանրում ունեցած իր փորձը, ստեղծում է քաղաքական բազում պաստառներ ու ծաղրանկարներ: Նա հաճախ էր մեկնում ռազմաճակատային գիծ՝ ստեղծագործական նյութեր հավաքելու համար: Նկարչի առավել հայտնի գործերից է «Գնդապետ Ս. Զաքյանի վերջին հրամանը» (1942 թ.) բազմաֆիգուր կտավը: Դիվիզիայի հրամանատար Զաքյանը մահացու վիրավորում էր ստացել Ղրիմի ճակատամարտում: Բայց նույնիսկ ծանր վիրավոր վիճակում գնդապետը հրամանատարական կետից շարունակում է ղեկավարել մարտը: Նալբանդյանի կտավի հուզական հնչեղությունն ուժեղացնում է մուգ հագեցած կոլորիտը: Լուսաստվերային կտրուկ համադրումներն ընդգծում են պատկերված պահի լարվածությունն ու դրամատիզմը: Նալբանդյանի հաջորդ մեծ կտավը կոչվում է «Նվերներ ռազմաճակատին: Հայ կանայք Մեծ հայրենական պատերազմի օրերին» (1945 թ.): Այս ստեղծագործությունը ծննունդ էր առել նկարչի հարուստ կենսական տպավորություններից, որ նա ստացել էր Հայաստանում՝ պատերազմի տարիներին: Վերոնշյալ կտավը ցուցադրվել էր Տրետյակովյան պատկերասրահում 1946 թ.՝ համամիութենական հետպատերազմյան առաջին գեղարվեստական ցուցահանդեսում:

Շարունակությունը՝ էջ 8

ՄԱՇՎԱՆ ՖՈՒԳԱ

Սկիզբը՝ էջ 5

Երախտապարտ որդին մորը դիմում էր «իմ հոգի մայր», «մայր իմ», «իմ կյանք մայր», «իմ մահ մայր» երդում-մեծարանքներով:

Հոգեւոր քննիչները մոր անցյալն ուսումնասիրելիս նրա գոյություն չունեցող ծննդականի փոխարեն գտնում են որդու երեք տարբեր ծննդականներ՝ երեք տարբեր անուններով: Ասես ամեն ինչ միտումնավոր խառնված է խորհրդավոր գաղտնիքի մեջ:

Մոր սրբադասման հետ կապված՝ կաթոլիկ եկեղեցին մտնում է գործարքների մեջ, որ կեղծիքի մեջ կորած աշխարհիկ կյանքի քողարկված շարունակությունն է:

Այստեղ եւս որոշիչ են ուժը, համառությունն ու պարտադրանքը, եւ այս դիրքերից է, որ հերթական հայր սուրբին գեներալն ասում է. «Պահ, էդ էր մնացել պակաս, հայր սուրբ, էդ էր մնացել պակաս որ ոչ ոք ինձ չսիրի <...> էս երկրում որ իմ կամքով չեմ ընտրել այլ ինձ տվել են հենց էնպես» (էջ 152): Այստեղ է, որ հոգեւոր աշխարհի ոսկե գմբեթի տակ, ըստ գեներալի, «երկրեսանի աշխարհի» բարքերն են:

Լետիսիա Նասարենոյին ընտրել էր մերկանդամ իր առջեւով անցնող հոգեւոր դասի աղջիկների միջից: Նորաթուխ միանձնուհիներից առանձնացրել էր այս մեկին, որը (ձեւավորում է կերպարը) «ոչնչով չէր տարբերվում մնացյալից, կարճահասակ էր եւ լիքը, ամրակազմ, կլորիկ հետույքով, փարթամ ու շլացուցիչ ստինքներով, կոպիտ ձեռքերով, առաջ ցցված ամոթույքով, էտիչով կտրտված մազերով, իրարից հեռու-հեռու եւ կացնի նման ատամներով, կճատ քթով, հարթաթաթ, սովորական, բոլորի նման նորաթուխ մի կույս» (էջ 156), որը երբ, առանց գեներալի կողմը նայելու, անցել է նրա մոտով, «անտառի գազանի մի մութ հետք է» թողել ետեւից, որից գնդապետի շունչը կտրվել է: Աղջկա ներկայությամբ էլ ավելի է խորանում զառամյալ գեներալի միայնությունը, նա իրեն զգում է շփոթված, գլխակորույս ու անօգնական, «ինչպես այն օրը, երբ առաջին անգամ տղամարդ դարձավ զինվորներին սպասարկող մի կնոջ հետ»: Այս դրվագը բավական է, որպեսզի հեղինակը խորանա հեռու կյանքի մանրամասների մեջ եւ անցյալի հիշողությունը կապի ներկա իրադարձությանը: Այսպես վեպը ծավալվում է իր մեջ հասունացող պատմություններով, ինչպես գետը՝ ներհոս վտակերով: Որտեղից այդ վախը. ի վերջո, երբ ապագա գեներալին զինվորներ սպասարկող կինը մերկացնում է, ինքն իր հերթին արձակում տաբատի կոճակները, սարսափից մազերը բիզ-բիզ են կանգնում, որովհետեւ վարտիքի մեջ ոչ թե փնտրածն է գտնում, այլ հսկայական ճողվածքը, որ ամբողջ կյանքում ուղեկցում է նրան: Եվ կինն ասում է. «Գնա մայրիկիդ մոտ, թող քեզ ուրիշի հետ փոխի, դու բանի պետք չես, եւ ահա այդ նույն վաղեմի վախն է պաշարել ու քարացրել նրան Լետիսիա Նասարենոյի մերկ մարմնի առաջ» (էջ 159):



Նահապետն ասես մեռնող-հառնող բնության մաս լինի: Նա անընդհատ մեռնում է, բայց կենդանի է. սա շատ խորհրդանշական է, որով Մարկեսն ուզում է ասել, որ իշխանությունը զավթած բռնապետերն անմահ են: Տարբեր ձեւերով տարբեր երկրներում մեկին փոխարինում է մյուսը, փոխվում է անձը, բայց իշխանության լծակները նույնն են: Դա է պատճառը, որ վեպի յուրաքանչյուր դրվագ թեեւ սկսվում է մահվան տեսարաններով, բայց շատ արագ ամեն ինչ վերածվում է կենսական պատմությունների:

Իր զառամյալ տարիքում, համապատասխան տեղերում առողջական խնդիրներով հանդերձ, նահապետը որձ է, այո՛, հենց այդպես, բառի թե՛ կենսաբանական, թե՛ կենդանական նշանակությամբ: Ուտելուց անգամ այլեւս հաճույք չի զգում, իրեն մատուցած սնունդը լցնում է կոյուղու մեջ, որպեսզի կասկածներ չունենան, բայց երբեք անտարբեր չէ կանանց հանդեպ, մի թեթեւ ակնարկ, ծայրահեղ դեպքում՝ շոյանքի պես թաթալոշ, եւ կանայք հավի պես պպզում էին նրա դիմաց:

Այսքանով հանդերձ՝ անհայտ է նրա արտաքինը. այդ մասին հեղինակը լռում է գուցե այն պատճառաբանությամբ, որ նա տարիքի հետ մեկտեղ անընդհատ կերպարանափոխվում է, եւ որ նրան ոչ ոքի չի տեսել, իսկ ով էլ տեսել է, կամ վաղուց չկա, կամ վախից լռում է:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Շահան Շահնուրի մի պատմվածքի գրական-գաղափարական մշակումը

Սկիզբը՝ էջ 6

Ներկայացվող նյութից առթված հեռացման ուշագրավ օրինակ է պատմվածքի այն հատվածը, որտեղ գրողը խոսում է *«գեղանի մանչուկներու»* ամբողջ երամների մասին, նրանց բնութագրում որպես *«զմայլելի խարտեաշներ, երկար թարթիչներով թուխեր…»* եւ հանկարծ, իր խոսքի զարգացման տրամաբանությունից անսպասելի հեռանալով, գրում է. *«Արդէն իմ դէմքէս գուշակեցիք, որ ես մանուկ սիրող մարդ չեմ… Բայց սիրել կը ձեւացնեմ կեղծաւորաբար…»* (էջ 10): Մի քանի էջ հետո Շահնուրը տալիս է Էմիլի կեղծավորության դրդապատճառները: Երգիծական գծապատկերներով օժտված Էմիլը ցուցադրաբար սեր է ձեւացնում մանուկների նկատմամբ, քանի որ *«մանչուկն»* ունի քովնկից *«աղուոր մայր»*, *«ստնտու կաթնաթոյր»*, որոնք եւ նրան մղում են ոսկեբերան շողոքորթության ու սիրատոչորության: Էմիլը խորամանկում է ըստ կարեւորության եւ օգտակարության, որոնում է աշխատանք, բայց չի ուզում աշխատել, ամեն անգամ լքում է գտնված գործը, քանի որ իր խառնվածքով *«հակառակ է աշխատութեան»*, աշխատանքը *«կը ժխտէ»* երջանկության իր ընկալումներն ու գաղափարները: Նրա որոնածը *«ազատ հորիզոններն»* են, որ նրան տալիս են միմիայն *«…կնոջ մարմնին մտերմութիւնը, անոր բոյրը… եւ տակաւին՝ յառաջընթաց կիսագումտերն ու յետսապահ կլորութիւնները»* (էջ 13):

Բայց դառնանք պատմվածքի երկրորդ տարբերակի բուն ասելիքին: Առաջին տարբերակում կառուցված *«սինեման»* սպիտակ պաստառի վրա ցուցադրում է մանկական սյուժե. բացվում է մեխանիկական սարքի դռնակը, պատկերվում է պարտեզապատ վիլլա, որտեղ երեխան դաս է պատրաստում: Գողերը մտնում են պարտեզ: Երեխան եւ բակի շունը հալածում են գողերին: Վերջիններս փախչում են՝ առեւանգելով տղային: Հեծանվորդ ոստիկանները հետապնդում են գողերին: Այս ամենն ուղեկցվում է հանդիսատես երեխաների կանչերով, ծիծաղով, ծափահարություններով, բացականչություններով:

Շարադրանքի հաջորդ հատվածում Շահնուրը խոսում է իր հոգեկան ծանր վիճակի մասին, գրում, որ կեսգիշերային մթության մեջ թափառում է փողոցից փողոց՝ զգալով հոգնածություն, հուսահատություն, *«մանաւանդ անսահման տենչանք՝ չապրելու»* (էջ 10): Սա այն վիճակն է, որը բնորոշ է ամեն գաղթահայի եւ պայմանավորում է նրա կացութաձեւը՝ անկախ այն բանից՝ նա մերվելի է այդ իրականությանը, թե ոչ:

Առանձնության այդ վիճակը նրան տանում է Լյուքսեմբուրգի պարտեզ, որտեղ նա մտաբերում է այնտեղ իր ապրած երջանկության հազվագյուտ պահերը, երբ ինքը կարողանում էր երեխաներին զվարճացնել, իսկ հիմա *«զարհուրելի խաւարի մէջ»* նա ուզում է *«բանի մը կառչիլ»*, բայց իր կառուցած գործիքից զատ, այլ բան չի գտնում: Հայտնվում են պարտեզի պահապանները եւ պատմում, որ գիշերվա կեսին *«սինեմային ժամացոյցը խանգարուեր է»*, ու զանգակը հնչել է: Եվ քանի որ գիշերվա այդ ժամին հանդիսականներ չկային, իրենք են *«շապիկով», «բոկոտն»* գնացել եւ դիտել *«սինեման»*. «Բայց ըսէք, կ'աղաչեմ', եթէ մենք ատենին չհասնէինք, ո՞վ պիտի նայէր, ո՞վ, ո՞վ… » *(նույն տեղում, էջ 11)*:

Պատմվածքի ենթատեքստն ուղղված է արվեստի ու գրականության մարդկանց, այլ խոսքով՝ ստեղծագործող մարդկանց առհասարակ, բայց, ինչպես գրում է հեղինակը պատմվածքի բնաբանում, այն վերաբերում է մանավանդ այն *«երտասարդ, անհանդարտ ու դիւրաբորբոք գրիչներուն»*, որոնք արձագանքում են *«մամուլի խաւարէն արձակուած ամէն խօսքի»*: Ուրեմն Շահնուրի գրության մեջ Լյուքսեմբուրգի պահապանների ցուցաբերած արձագանքը *«խանգարուած գործիքին»* այլ բան չէ, եթե ոչ *«ինքզինքին ցուցնելու»* բոկոտն հրապարակ ելնել, ինքնագոհության ու հավակնոտության արտահայտություն, որն արտահայտվում է *«ո՞վ պիտի նայէր, ո՞վ, ո՞վ»* բառերով:

Գրականության մեջ անհիմն հայտնված այդ սնամեջ *«ուրուականները»*, որ լեցուն են *«փքուն հպարտութեամբ»*, ենթակա են հալածման ճիշտ այնպես, ինչպես պատմվածքի շարադրանքում հալածվում են վիլլա մտած գողերը, այսինքն՝ կյանք մտած եւ այդ կյանքը բռնացող ու խեղող մարդիկ:

Գրական ինչպես նոր, այնպես էլ հին սերնդի այն *«գիշերապահ պահակներին»* (որոնք արձագանքում են ամեն մի խափանված զանգի) ուղղված շահնուրյան տեսակետը շատ ավելի ծավալուն ու խորացված, ասելիքի ու հասցեատերերի առումով ավելի որոշակի շարադրվեց պատմվածքի երկրորդ՝ լրամշակված տարբերակում՝ ըստ ամենայնի նկատի ունենալով շոշափվող հարցի՝ հետագայում եւս ունեցած կարեւորությունը: Խնդրին անդրադառնալու պատճառներից մեկն էլ իր *«Մենք»* հոդվածի նկատմամբ նախկինում ցուցաբերված քննադատական վերաբերմունքն էր:

Շահնուրը հաճախ է վերամշակել իր գործերը՝ դրանք ենթարկելով լեզվական ու ոճային եւ անգամ բովանդակային բազում փոփոխությունների ու ճշգրտումների՝ իր աշխատանքն անվանելով *«վերաքննութիւն», «յղկում»*: Օրինակ՝ *«Զոյգ մը կարմիր տետրակները»* նա վերանայել է չորս անգամ: *«Լիւքսէմպուրկի պահապանը»*, որը հեղինակի իսկ խոստովանությամբ «անանուն հաւկիթ մըն էր», եւս մի քանի մշակումներ է ունեցել: Ահա այդ *«անանուն հաւկիթից»* է (առաջին տարբերակ), որ դուրս եկավ *«անսովոր թռչունը»* (երկրորդ տարբերակ):

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Դմիտրի Նալբանդյանի ստեղծագործական ժառանգությունը

Սկիզբը՝ էջ 7

Դմիտրի Նալբանդյանը շատ է ճանապարհորդել Հայաստանում: Նա հանդիպում էր բանվորների եւ կոլտնտեսականների հետ, ծանոթանում նաեւ հայ գրողների ու դերասանների հետ: Այս բոլոր հանդիպումներն ու ծանոթությունները հարստացնում են նկարչի ստեղծագործությունները. նրան ոչ միայն նոր թեմաներ են տալիս, այլեւ գեղարվեստական թարմ խնդիրներ են առաջ բերում: Հենց այս շրջանում է արվեստագետը դիմանկարների մի ողջ շարք ստեղծում: Դրանք հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչների դիմանկարներն էին: Ուշագրավ է Ավետիք Իսահակյանի դիմանկարը: Նշենք, որ Նալբանդյանից առաջ հայ մեծ բանաստեղծին նկարել էր Մարտիրոս Սարյանը: Նալբանյանը մեծ հուզմունքով է կերտում պոետի դիմանկարը. նա կարծես ստեղծագործական մրցակցության մեջ էր մտել Մարտիրոս Սարյանի հետ: Նալբանդյանն Իսահակյանին նկարել է ստեղծագործելու պահին: Բանաստեղծը մի պահ գլուխը վեր է բարձրացնում եւ ընկնում մտորումների մեջ: Նկարի գեղեցկությունը գորշ-արծաթագույն կոլորիտի մեջ է, իսկ վրձնահարվածը խիտ է ու հագեցած: Պոետի դեմքը ոգեշունչ արտահայտություն ունի: Նրա հայացքը լի է իմաստությամբ եւ արթնությամբ: Նալբանդյանը կարեւորել է պոետի գլխի ու մարմնի լուսաստվերային մշակումը: Նա չի ընդգծում ձեւի ցցունությունը, բայց միեւնույն ժամանակ չի դարձնում այն հարթային: Բանաստեղծի աշխատանքային սենյակի համեստ ներքնահարդարումը, պատուհանից դուրս եղած արեւապայծառ բնապատկերը, սեղանին դրված գրքերը օգնում են դիտողին զգալ ստեղծագործական մթնոլորտը: Իսահակյանի դիմանկարը ցուցադրվել է Երեւանում 1942 թ. եւ մեծ հաջողություն ունեցել: Ոգեշնչված արվեստագետն այնուհետեւ ստեղծում է դիմանկարների մի ողջ շարք: Նալբանդյանը հայտնի է որպես յուրօրինակ դիմանկարիչ: Նա հետեւում էր ռուսական դիմանկարային արվեստի լավագույն ավանդույթներին, մասնավորապես՝ Ռեպինի ու Սերովի նկարչական մեթոդներին:

Հետպատերազմյան տարիներին Նալբանդյանի ուշադրությունը գրավում է նաեւ հայկական բնապատկերը: Արվեստագետը դիմում է ծանոթ՝ հայկական մոտիվներին, տարակերպում է վերջիններս: Նա միշտ կարողանում է գտնել հայրենյաց բնության անկրկնելի գեղեցկությունը: Նա հաճախ է պատկերել Արարատյան դաշտը, Սեւանա լիճը, Բյուրականի եւ Աշտարակի շրջակա տարածքները, ինչպես նաեւ հին հայկական ճարտարապետության հուշարձանները: Նալբանդյանի էտյուդներում մենք տեսնում ենք Երեւանը՝ հին քաղաքը՝ խճճված բավիղներով: Նա նաեւ պատկերել է նորակերտ Երեւանը՝ աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը: Հետաքրքրական է Նալբանդյանի «Երեւան. Օպերային թատրոն» (1944 թ.) գործը: Նկարչի ստեղծագործական գործունեությունը հետպատերազմյան տարիներին լայնածիր է ու բազմազան: Նալբանդյանը մեծ ուշադրություն է դարձրել նաեւ «Լենինյան» թեմային:

Դմիտրի Նալբանդյանն ստեղծել է դիմանկարների մեծ սրահ: Նկարչի կտավներում պատկերված են բանվորներ, գյուղացիներ, զինվորներ, գիտնականներ, մշակույթի ու արվեստի գործիչներ: Նալբանդյանը նաեւ ստեղծել է Կոմկուսի մի շարք հայտնի գործիչների դիմանկարները:

Արվեստագետը շատ է աշխատել որպես բնանկարիչ: Նալբանդյանի բնապատկերներում վառ կերպով դրսեւորվում է կենսահաստատության սկզբունքը, որն ի դեպ բնորոշ է արվեստագետի ողջ ստեղծագործական գործունեությանը: Նալբանդյանի թե լիրիկական եւ թե էպիկական բնանկարներում արտահայտված են մարդկանց մտքերն ու տրամադրությունները, նրանց սերը հայրենիքի հանդեպ: Նրա վրձնից չեն վրիպել նաեւ Մոսկվայի մերձակայքի անտառներն ու դաշտերը, Ռուսաստանի այլ շրջաններ, Կովկասի լեռներն ու Ղրիմը: Նալբանդյանը շատ բնանկարներ է ստեղծել նաեւ արտասահմանյան ուղեւորությունների ընթացքում: Արվեստագետի նկարները կրակոտ են ու գունեղ: Դրանցում դիտողը զգում է, որ նկարիչն անհագուրդ կերպով տենչում է տեսնել բնության գեղեցկությունը: Նա կարծես մշտապես ձգտում է ճանաչել բնությունը՝ իր բոլոր դրսեւորումներով: Արվեստագետը հատկապես սիրում էր ստեղծագործել աշնան ամիսներին: Նա պարզապես տարված է իր առաջ դրված ստեղծագործական խնդրով: Միեւնույն ժամանակ Նալբանդյանը չի անտեսում ստեղծագործության պոետական բովանդակությունը: Նկարիչը կարծես պարտադրում է դիտողներին հիանալ ծաղկող այգիների սպիտակավարդագույն երանգներով, Սեւանա լճի ինքնատիպ հմայքով, ձնյունապատ Արարատով եւ Աշտարակի գեղատեսիլ վայրերով:

Նալբանդյանը, հանդես գալով որպես ժանրի վարպետ եւ բնանկարիչ, կարողանում է իր գործերում արտահայտել մարդու եւ շրջապատող իրականության ներդաշնակ միասնությունը («Հովվի առավոտը: Սիրելի երգը», «Մայրական գարուն», «Հայաստան: Կոլտնտեսուհիների պարը», «Վերադարձ լեռներից»): «Հովվի առավոտը» կտավում արվեստագետը պատկերել է, թե ինչպես է ոչխարների հոտը՝ հովիվների ուղեկցությամբ, շարժվում քարքարոտ, արեւակեզ ճանապարհով: Հետին պլանում վեր է խոյանում Արարատը՝ երկնագույն-մանուշակագույն մշուշի մեջ: Գեղանկարիչը կարծես վերցրել է իրական կյանքից մի կտոր եւ պատկերը հագեցրել բանաստեղծական զգացումներով՝ արտահայտելով իր մեծ սերը հայոց հողի հանդեպ:

Հավելենք նաեւ այն, որ Նալբանդյանը ճանապարհորդել ու ստեղծագործել է Բուլղարիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Հնդկաստանում, Իսպանիայում, Հունաստանում եւ Հոլանդիայում: Այս շրջանի գործերի մեջ կան բնանկարներ, ժանրային տեսարաններ եւ դիմանկարներ: Նկարիչը շատ լավ էր զգում յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները: Հնդկաստանին նվիրված գործերի համար նկարիչը 1968 թ. պարգեւատրվել է Ջավախարլալ Ներուի անվան մրցանակով:

Դմիտրի Նալբանդյանի պատկերասրահում քիչ չեն նաեւ նատյուրմորտները: Նա սիրում էր նկարել բուրումնավետ ծաղիկների փնջերը, մրգերի փայլուն ու թավշյա մակերեսը, վարդի եւ հասմիկի նուրբ թերթիկները, դաշտային ծաղիկների բազմագունությունը, փափուկ գորգերի եւ դեկորատիվ կտորների պերճությունը: Աշխատելով նատյուրմորտի ժանրում՝ Նալբանդյանն ավելի խորապես է ընկալում գունային հարաբերությունների օրենքները, կատարելագործում իր գեղանկարչական վարպետությունը: Նկարչի համար էականը ներքին ճշմարտության արտահայտումն էր, առարկայական աշխարհի արտացոլում՝ իր ողջ բազմազանությամբ: Նալբանդյանի նատյուրմորտները կարծես ապրում են առանձին կյանքով, սակայն դրանցում զգացվում է մարդկային ներկայությունը:

Նալբանդյանը ձգտել է շփվել արվեստասերների մեծ լսարանի հետ: Նրա եռանդն ու աշխատունակությունը չեն նվազել տարիների ընթացքում: Արվեստագետն արժանացել է մի շարք կոչումների ու մրցանակների. ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ պետական մրցանակի երկակի դափնեկիր:

Դմիտրի Նալբանդյանն իր մահկանացուն կնքեց 1993 թ. հուլիսի 2-ին Մոսկվայում:

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 29.03.2019 թ.
Տպաքանակը՝ 1175